ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1385 20.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ
գեներալ-լեյտենանտ
պարոն. Վ.Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Վարդենիսի ՁՊՎ և արձանագրվել էր մի շարք խախտումներ:

1. ՁՊՎ-ում չէր պահպանվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված +18°C ջերմաստիճանը:
2. <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չի գրանցվում ՁՊՎ մուտք գործած մի քանի փաստաբանների մուտքը և ելքը, որովհետև մինչ այցելության օրը գրանցամատյաններում գրանցված էր երկու տեսակցություն փաստաբանների հետ, բայց հայտերը, ընդհանուր առմամբ յոթն էին և բոլորին էլ ապահովել էին տեսակցությունով:
3. Մայիս Հակոբի Առաքելյանը 03.10.2013թ-ին ժամը 16.00-ից մինչև 17.20 տեղափոխվել է քննչական սենյակ քննչական գործողություններ կատարելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ քննչական գործողությունները կատարվել են առանց համապատասխան թույլտվության:

   04.10.2013թ-ին ժամը 12.20-ին Մ. Առաքելյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ և կրկին բացակայում էր ուղեկցող ջոկի հայտը տեղափոխելու վերաբերյալ: Մ. Առաքելյանի վերաբերյալ առկա էր մեկ ստացական՝ որտեղ նշված էր **03.10.2013թ. ժամը 13.40-ին ուղեկցող դասակի ոստիկան ենթասպա Գագիկ Կարապետյանը ստացել է**, բայց բացակայում է թե ուր է տեղափոխել և ինչ նպատակով: */փաստը հաստատող լուսանկար-1/*

4. Տարոն Գագիկի Կիրակոսյանը եղել է հետախուզվող և բերման է ենթարկվել <<Զվարթնոց>> օդանավակայանից: Անձին բերման ենթարկելու արձանագրությունը կազմվել է ՀՀ ոստիկանության Վարդենիսի բաժնում 25.07.2013թ-ին ժամը 04^{00}, այլ ոչ թե՝ <<Զվարթնոց>> օդանավակայանում: Ոստիկանության բաժնում տվյալ անձը խուզարկության է ենթարկվել ժամը 04^{05}-ին, հաջորդիվ տեղափոխվել է ՁՊՎ: Տ. Կիրակոսյանը ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել ժամը 04^{00}-ին , ավելի շուտ, քան խուզարկվել է ոստիկանության բաժնում:
5. Արկադի Արեստի Եղիգարյանը ՁՊվ է ընդունվել 08.07.2013թ-ին ժամը 22^{05}-ին: Ազատ է արձակվել 09.07.2013թ-ին ժամը 14^{55}-ին գրավի դիմաց, սակայն ՁՊՎ-ում բացակայում էր քննիչի կողմից կազմված համապատասխան ազատ արձակելու մասին որոշումը:

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացված իրավախախտումների վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 3542 <<16>> 12 2013թ.

Ձեր 20.11.2013թ. թիվ 2621/1385 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր վարչությունում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Դիտորդների խմբի այցելության օրը (29.10.2013թ.) և դրա նախորդող օրերին ՁՊՎ-ում անձինք չեն պահվել, այդ պատճառով ջերմաստիճանը փոքր ինչ ցածր է եղել սահմանված +18°C-ից, սակայն 2013թ. նոյեմբերի մեկից գործում է լոկալ ջեռուցման համակարգը և ՁՊՎ-ում պահպանվում է նախատեսված ջերմաստիճանը:

2. ՁՊՎ-ում պահվող անձանց հետ տեսակցությունների տրամադրման 7 հայտերից 5-ը ստացվել է փաստաբանների կողմից և 2-ը նախաքննական մարմիններից, որոնք տրամադրվել են սահմանված կարգով և դրանց վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ:

3. Մ.Առաքելյանը ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ից ոստիկանության Վարդենիսի բաժնի ՁՊՎ է տեղափոխվել 01.10.2013թ. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից նախապես նշանակված 03.10.2013թ. ժամը 14.00-ի դատաքննությանը նրա մասնակցությունը ապահովելու համար: Նշված օրը ժամը 13.40-ին ուղեկցող դասակի կողմից տեղափոխվել է դատարան, որտեղ դատաքննությունը հետաձգվել է և հաջորդ օրը՝ 04.10.2013թ. դատավորի կողմից տրված հայտի հիման վրա վերջինս տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ:

Հարկ է նշել, որ Մ.Առաքելյանի ուղեկցումը իրականացվել է դատարանի կողմից ուղեկցող դասակին և բաժնին տրված հայտի հիման վրա, որտեղ հստակ նշվում է ուղեկցման ժամանակը և վայրը, ուստի ՁՊՎ-ից նշված անձը չեր կարող տեղափոխվել անհայտ

ուղղությամբ: Ինչ վերաբերվում է ուղեկցման պահանջագրերի բացակայելուն և դրանցում կատարված թերի գրառումներին, ապա այդ կապակցությամբ հանձնարարականներ են տրվել ուղեկցող դասակի ծառայողներին նմանատիպ թերությունները բացառելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ Մ.Առաքելյանի վերաբերյալ հարուցված քրեական գործը գտնվել է դատաքննության փուլում և նա ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում երբևէ ՁՊՎ-ի խցից դուրս չի բերվել և քննչական գործողություններ կատարելու նպատակով քննչական սենյակ չի տեղափոխվել:

4. Հետախուզվող Տ.Կիրակոսյանը <<Զվարթնոց>> օդանավակայանից 24.07.2013թ. ժամը 23.30-ի սահմաններում բերման է ենթարկվել ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ 25.07.2013թ. ժամը 04.00-ին կազմվել է անձին բերման ենթարկելու մասին արձանագրություն, որում շփոթմամբ նշվել է բաժին ներկայացնելու (04.00) այլ ոչ թե <<Զվարթնոց>> օդանավակայանից արգելանքի վերցնելու (23.30) ժամը: Նույն օրը ժամը 04.05-ին Տ.Կիրակոսյանը ենթարկվել է խուզարկության և ժամը 04.10-ին տեղափոխվել ՁՊՎ: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում Տ.Կիրակոսյանի վերաբերյալ կատարվել են գրառումներ, որտեղ 7-րդ սյունակի տակ գրված 04.00-ն ոչ թե ՁՊՎ ընդունվելու այլ բաժին ներկայացնելու (ձերբակալման) ժամն է:

Միաժամանակ հայտնում ենք, որ Տ.Կիրակոսյանին բերման ենթարկելու վերաբերյալ կազմված արձանագրությունում արգելանքի վերցնելու ժամը չնշելու համար քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորը նախազգուշացվել է:

5. Ա.Եղիգարյանը ՁՊՎ է ընդունվել 08.07.2013թ. ժամը 22.05-ին և հաջորդ օրը 09.07.2013թ. ժամը 14.55-ին ազատ է արձակվել գրավի դիմաց, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի և ոստիկանության Վարդենիսի քննչական բաժանմունքի քննիչի կողմից կայացված որոշումները: Քննիչի կողմից անձին արգելանքից ազատ պրձակելու մասին կայացրած որոշումը տրամադրվել է ՁՊՎ վարչակազմին, սակայն վերջիններս այն սխալմամբ դրել են մեկ այլ թղթապանակի մեջ:

Վերոհիշյալ խախտումը թույլ տալու այն է՝ փաստաթղթերը համապատասխան անձնական գործում չպահելու համար, բաժնի հերթապահ մասի պետը նախազգուշացվել է:

Պետ, ոստիկանության գեներալ-մայոր **Վ. Եղիազարյան**